Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Ջրաբերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), ռուսաց լեզվի (15 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերը համալրելու համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) Անձը հաստատող փաստաթուղթ

4) Ինքնակենսագրություն (Ձև4),

5) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6) Մեկ լուսանկար՝3x4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

9) Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ավարտը վերացնել և համալրել դրանք:

*Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. հունվարի 25-ից մինչև 2023թ փետրվարի 7-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:*

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

*Մրցույթը տեցի կունենա **2023թ փետրվարի 9-ին՝ ժամը 14^{00}-ին**, Կոտայքի մարզի Ջրաբերի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1 –ին փողոց, շենք 24:*

Տեղեկությունների համար զանգահարել *(093) 77-00-10* հեռախոսահամարով: